# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ՀՀ ԳՄ ԶՀ-ԳՀԽԾՁԲ-21/06 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի**

**գ. Զոլաքար** **«25» «08» 2021թ.**
**ժ 11:00**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ Պ. Սարիբեկյան, Լ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Հայտերը բացվել են 2021թ. օգոստոսի 25-ին՝ ժամը 11:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը:

| **հ/հ** | **Մասնակցի անվանումը** | **Մասնակցի հասցեն** |
|---|---|---|
| 1 | «Արման-Թաման» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ |

3. Մասնակիցների հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են:
4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանությունը |
|---|---|---|
| 1 | «Արման-Թաման» ՍՊԸ | Համապատասխանում է |

**5.** Մասնակիցների հայտով ներկայացրած գնային առաջարկները՝ ՀՀ դրամով

Զոլաքար համայնքի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեքբերում

| **ՀՀ** | **Կազմակերպության անվանումը** | **Նախահաշվային գինը** | **Արժեք** | **ԱԱՀ**** | **Ընդհանուր գինը** |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Արման-Թաման» ՍՊԸ | 1021128 | 980000 | - | 980000 |

6. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա և հայտ ներկայացրած մասնակիցը ներկա էր հայտերի բացման նիստին, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիսում կազմակերպել գների նվազեցման շուրջ բանակցություններ «Արման-Թաման» ՍՊԸ-ի հետ:

Բանակցության արդյունքում «Արման-Թաման» ՍՊԸ-ն չվերանայեց հայտով ներկայացված գնային առաջարկը և թողեց անփոփոխ:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- «Արման-Թաման» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ չսահմանելով:

Ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթաց՝ սույն հայտարարությունը հրապարակելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագրի ծանուցման օրը, ժամը 12-00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Զոլաքար, 2-րդ փողոց, շենք 17 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Գ. Մխիթարյան

Անդամներ՝ _____ Պ. Սարիբեկյան

_____ Լ. Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան